ԻՄԱՑԵՔ ԱՎԵԼԻՆ
ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿԻ ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Պատվաստանյութի Մասին

JYNNEOS™ պատվաստանյութը ներկայումս միակ պատվաստանյութն է, որն արտոնագրված է Մննդի և Դեղորայքի Վարչության (FDA) կողմից՝ մարդկանց մոտ կապիկի ծաղիկի կանխարգելման համար: Այն թույլատրված է օգտագործման համար 18 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդկանց և հատուկ հանգամանքներում՝ 18 տարեկանից ցածր տարիքի անձանց: JYNNEOS-ը պարունակում է կենդանի վիրուս, որը լավ չի բազմանում մարդկանց մարմնում, ինչը նշանակում է, որ այն չի կարող ձեզ վարակել կամ դարձնել վարակող: Այն տրվում է երկու ներարկումով 4 շաբաթ ընդմիջումով:

Ներկայումս Միացյալ Նահանգներում կա JYNNEOS-ի սահմանափակ պաշար, սակայն առաջիկա շաբաթներին և ամիսներին սպասվում է պաշարների ավելացում:

Պատվաստման Իրավասություն

Սահմանափակ պաշարների պատճառով ներկայումս Հանրային Առողջության Վարչությունը կապիկի ծաղիկի դեմ պատվաստումն առաջարկում է որոշ բարձր վտանգավորության խմբերում գտնվող մարդկանց: Պատվաստումը կարող է պաշտպանել մարդկանց կապիկի ծաղիկից:

Պատվաստանյութը չպետք է տրվի այն անձանց, որոնք արդեն վարակված են կապիկի ծաղիկով կամ ունեն կապիկի ծաղիկի նշաններ և ախտանիշներ:

Ախտանիշներ ունեցող անձինք պետք է խոսեն իրենց հիմնական բժշկական ծառայություններ տրամադրողի հետ կամ զանգահարեն 2-1-1, եթե չունեն բժշկական ծառայություններ տրամադրող: Բացի այդ, հիմնական բժշկական ծառայություններ տրամադրող չունեցող անձինք, որոնց մոտ առաջացել է ցան սեռական օրգանների կամ հարհետանցքային շրջանում, կարող են հասանելիություն ունենալ ծառայություններին Հանրային Առողջության Սեռական Առողջության Կլինիկաներում (http:// publichealth.lacounty.gov chs SexualHealthClinicSchedule.pdf):

ՍԿԱՆԱՎՈՐԵՔ ՍՏՈՐԵՎ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Պատվաստմանը Հաջորդող Կողմնակի Ազդեցությունները

JYNNEOS պատվաստանյութը ստացող մարդկանց մեծամասնության մոտ դրսևորվում են միայն աննշան հակազդեցություններ, ինչպիսիք են թեթև ջերմությունը, հոգնածությունը, գեղձերի այտուցը և կարմրությունն ու քորը ներարկման հատվածում: Այնուամենայնիվ, պատվաստման վերաբերյալ յուրաքանչյուր մտահոգություն անհրաժեշտ է քննարկել բժշկական ծառայություններ տրամադրողի հետ՝
նախքան պատվաստվելը:

Պատվաստման Ժամանակը

CDC-ն խորհուրդ է տալիս, որ պատվաստումը կատարվի կապիկի ծաղիկի հետ շփման օրվան հաջորդող 4 օրվա ընթացքում՝ հիվանդության առաջացումը կանխելու համար: Եթե պատվաստումը կատարվում է վարակի հետ շփման օրվան հաջորդող 4-14 օրերի ընթացքում, պատվաստումը կարող է նվազեցնել հիվանդության ախտանիշները, սակայն կարող է չկանխել հիվանդությունը: Պաշտպանությունը համարվում է լիարժեք պատվաստանյութի երկրորդ դեղաչափի ներարկումից 2 շաբաթ անց: Հաշվի առնելով ներկայումս պատվաստանյութի սահմանափակ ազգային պաշարը՝ Հանրային Առողջության Վարչությունը տվյալ պահին առաջնահերթությունը տալիս է իրավասություն ունեցող բոլոր անձանց որքան հնարավոր է շատ կապիկի ծաղիկի դեմ պատվաստանյութի առաջին դեղաչափեր տրամադրելուն: Պատվաստանյութերի ազգային պաշարների ավելացման դեպքում Հանրային Առողջության Վարչությունը հասանելի կդարձնի երկրորդ դեղաչափերն այն անձանց համար, որոնք ստացել են իրենց առաջին դեղաչափը:

Կապիկի ծաղիկի դեմ պատվաստանյութի մասին հավելյալ տեղեկությունների համար, տե՛ս Պատվաստման Տեղեկատվական Թերթիկը (VIS)՝
Ծաղիկի/Կապիկի Ծաղիկի Դեմ Պատվաստանյութ (JYNNEOS). Ինչ պետք է իմանաք
(https://www.cdc.gov/vaccines/hcp/vis/vis-statements/smallpox-monkeypox.pdf):

Քանի որ տեղեկությունները արագորեն թարմանում են, խնդրում ենք այցելել Հանրային Առողջության Վարչության՝ Կապիկի Ծաղիկ կայքէջ՝ պատվաստման իրավասության և հասանելիության վերաբերյալ ամենաթարմ տեղեկությունների համար:

Կապիկի ծաղիկի վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար այցելեք՝
ph.lacounty.gov/Monkeypox/
Revised: 7/25/2022 (Armenian)

County of Los Angeles Public Health